

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԿԱԼ ԲՈԼՈՐ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»

Այսօր Մեր ջերմագին աղոթքն է, որ Փրկչին մեր Հիսուսի հրաշալի ծննդյան շնորհներով, Նոր տարին իր հետ բերի համայն աշխարհին խաղաղություն և ի մարդիկ հաճություն:

Մեր սրտագին աղոթքն է մանավանդ, որ Սուրբ Ծննդյան այս կենարար պատգամները կյանքի բաժինը դառնան նաև Մեր հավատավոր ժողովուրդին ի Հայաստան, հԱրցախ և ի ափյուռս աշխարհի:

Սույն խոհերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձերդ Սրբության, սուրբ Աթոռիդ ուխտապահ միաբանության և համայն Ձեր բարեպաշտ ժողովրդյան, Մեր հայրական սիրո ողջույնը և օրհնությունը՝ մաղթելով բոլորին հոգվո և մարմնո քաջառողջ խաղաղ կյանք, ընտանեկան երջանկությամբ, առաքինի ու բարի գործոց հաջողությամբ:

Թող մարդասերն Աստված պահապան ու օգնական մնա միշտ մեր Սուրբ Եկեղեցվույն և ազգիս համայն, հիրականացում նրա արդար ապասումներին:

Եղբայրական սիրով և ջերմագին բարի մաղթանքներով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով լեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ՀԵՂԵՌԱՌՈՂ ԱԵ ՀՀ, ՎՂՈՒԹՈՍՅՏՁԼ-ՅԱՏ ՂՍԻՁՂ ՀՈՒԵՌԱՌՈՂ ՀՀ ՅՏՁԼՈՅԹՈՂ ԻՍՓՈՂՁԻ
ՀՈՅՈՎՈՂԶՅՍԵՏՅՈ ՀՀ, ՎՂՈՒԹՏՈՅԵՌԻ ՏՂՈՅՀ ՏՁԼՈՇՅՈՒԻ ՀՀ, ՎՂՈՒԹՖԺՅՈՅՈ ՂՁԻՀԺՌԻ
ՎՈՂՈՒԻՂՎՍՀ 6 ՅՈՎՍԺՖՈՂՂԵ ՎԵՌՅՈՏՈԼ Ս. ՖՈՏՍՈՌՈՖՅՈՒ ԸՂԵՏ ՁԼՁ ՎՂՈԹՇՈՓՈՓ ՂՈՂՁՈՒ